

Հավելված
Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2022 թ. փետրվարի 24-ի թիվ որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,
Հ. Վ. Հովհաննիսյան
«24» փետրվարի 2022 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Իրավաբանական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ԵՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ծառայության գործառնությունների հետ կապված այլ իրավական ակտերով:
3. Ծառայությունը սահմանված կարգով կարող է ունենալ պաշտոնաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

4. Ծառայության խնդիրներն են.
 - 1) ռեկտորի հանձնարարությամբ մշակել ԵՊՀ ներքին իրավական ակտերի նախագծեր,
 - 2) ստուգել ԵՊՀ-ի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված և ծառայությանը ներկայացված ներքին իրավական ակտերի նախագծերի, այդ թվում՝ աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված անհատական իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ գործող օրենսդրության պահանջներին, ըստ անհրաժեշտության տալ իրավական մեկնաբանություններ ու մասնագիտական եզրակացություններ,
 - 3) ռեկտորի հանձնարարությամբ պատասխանել ԵՊՀ-ում ստացված պաշտոնական գրություններին, քաղաքացիների դիմումներին, բողոքներին և առաջարկություններին,
 - 4) մասնագիտական եզրակացություն տալ ուսանողներին ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին դիմումների (ուսանողի կարգավիճակի համապատասխանության) վերաբերյալ,
 - 5) սահմանված կարգով ապահովել ԵՊՀ ներկայացուցչությունը դատարանում, պետական և այլ մարմիններում,
 - 6) լուծել ծառայության հիմնական գործունեությանն առնչվող այլ խնդիրներ:
5. Ծառայությունն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունել որոշումներ, եթե դրանք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը և ԵՊՀ ներքին իրավական ակտերին:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6. Ծառայությունը ղեկավարում է պետը, ում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ղեկավարը:

7. Ծառայության պետը՝

1) կազմակերպում և վերահսկում է ծառայության ընթացիկ (ամենօրյա) գործունեությունը, ծառայությունում վարվող գրագրությունը և ներքին գործավարությունը,

2) ապահովում է ծառայության գործառույթների պատշաճ իրականացումը, լուծում դրանց իրականացման ընթացքում ծագած խնդիրները,

3) ծառայության աշխատողների միջև կատարում է աշխատանքային գործառույթների բաշխում, նրանց տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման,

4) ստորագրում է ծառայության կողմից պատրաստվող փաստաթղթերը, ծառայության գործառույթների շրջանակում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ, մասնագիտական եզրակացություններ և այլ փաստաթղթեր,

5) սահմանված կարգով ղեկավարին ներկայացնում է ծառայության հաստիքացուցակի նախագիծը,

6) մասնակցում է ԵՊՀ գիտական խորհրդի, ղեկավարի նիստերին, ԵՊՀ ղեկավարի կողմից հրավիրված խորհրդակցություններին, ԵՊՀ մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին, քննարկվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտության դեպքում ներկայացնում է մասնագիտական կարծիքներ ու եզրակացություններ,

7) ԵՊՀ ղեկավարին առաջարկություն է ներկայացնում ծառայության աշխատողներին աշխատանքի ընդունելու, սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, վերապատրաստելու, ատեստավորելու կամ նրանց պաշտոնեական առաջխաղացման վերաբերյալ,

8) իր բացակայության դեպքում առաջարկություն է ներկայացնում իր պարտականությունների ժամանակավոր կատարող (ըստ անհրաժեշտության) նշանակելու վերաբերյալ,

9) սահմանված կարգով տնօրինում է ծառայությանը հատկացված ֆինանսական միջոցները,

10) ծառայության անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում,

11) իրականացնում է ծառայության գործունեության հետ կապված, ՀՀ գործող օրենսդրությանը և ԵՊՀ կանոնադրությանը չհակասող այլ գործառույթներ:

8. Ծառայության աշխատողներն ունեն օրենքով, ԵՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում են այդ ակտերով նախատեսված պարտականություններ (սահմանափակումներ):

IV. ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅՑՆԵՐ

9. Ծառայության վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում է ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

10. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից՝ ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով: